
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈՒՄԸ
ԽԱՉԻԿ ԴԱՇՏԵՆՑԻ «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» ԴՐԱՄԱՑՈՒՄ

ԲԱՂԴԱՄԱՐՅԱՆ Ս. Ս.

Տիգրան Մեծը պատմության մեջ փառաբանված, հայ ժողովրդի պետականության համար մարտնչող նվիրյալներից էր, հայրենիքի պաշտամունքով ապրող հերոսական անհատականություն, որի համար ամենակենսական հարցը իր երկրի քաղաքական ճակատագիրն էր:

Ականավոր պատմաբան, արձակագիր Լեոն (Առաքել Բաբախանյան) Տիգրան Մեծի մասին գրել է. «...որ Տիգրանը մի շատ խոշոր անձնավորություն էր, այդ ցույց է տալիս նրա գործը: Մի խեղճ ու հասարակ բնավորության երբեք չէր հաջողվի 25 տարվա ընթացքում լինել ամենաուժեղ թագավորը Արևմտյան Ասիայում: Եվ նրան գնահատել ու մեծարել է նրա ժողովուրդը՝ դարձնելով նրան իր երգերի ու վիպասանությունների առարկա: Այս կողմից էլ նա Արտաշեսի արժանավոր հաջորդն էր»¹:

Հայ ժողովրդի՝ մաքառումներով լի հարուստ պատմության մեջ հայրենասիրության, խիզախության լուսապսակով զարդարված Տիգրան Մեծի կերպարին անդրադարձել են շատ գրողներ՝ Ղ. Ալիշան, Պ. Դուրյան, Վ. Բրյուսով, Հ. Խաչատրյան և այլք: Այս հերոսական կերպարը գեղարվեստական արտացոլում է գտել նաև տաղանդավոր գրող, թարգմանիչ Խաչիկ Դաշտենցի «Տիգրան Մեծ» դրամայում:

Օգտվելով մեր լեզվի պերճության ու ճոխության անսպառ պաշարներից՝ Խ. Դաշտենցը այս ստեղծագործության պատկերները ոճավորել է թեմային համապատասխան պատշաճ գույներով: Ռազմի խրոխտ տեսարանները լրացնում են էպիկական ավանդազրույցներն ու առասպելները, հեթանոսական տոների ու ծիսակատարությունների պատկերավոր և հայկական ու հունական դիցարաններին առնչվող ճշմարիտ նկարագրությունները: Տիգրան Մեծի գահակալության տարիներին Հայաստանում ծաղկում էին հելլենիստական մշակույթն ու քաղաքակրթությունը, և Խ. Դաշտենցը հարազատ է մնացել նկարագրվող դարաշրջանի ոգուն:

Բանահյուսությունը՝ ժողովրդի բանավոր ստեղծագործությունը, կոլեկտիվ բանականության և հույզերի արգասիքը, սկիզբ առնելով անհիշելի ժամանակներից՝ անընդհատ նորոգվել, թարմացել է՝ ներառելով ժողովրդական լայն զանգվածների աշխարհընկալումը, դարավոր կենսափորձը, իմաստությունը: Քերթողահայր Խորենացու գրի առած հայ ժողովրդական ստեղծագործության անզուգական բեկորները դարերի ընթացքում գրական-գեղարվեստական անսպառ աղբյուր են դարձել հայ գրողների համար: Ժողովրդական բանահյուսությունը, մասնավորապես հայ հեթա-

¹ Լեոն, Երկերի ժողովածու, հ. 1, Ե., 1966, էջ 321:

նոսական առասպելաբանությունը, որոշակի նյութ է տվել նաև Խաչիկ Դաշտենցի դրամային: Տաղանդավոր գրողը տեղին է օգտագործել «գողթան երգերը», Արտաշես արքայի երգերից մեկը, երբ նա, որսով տարվելով, հեռացել էր երկրի սահմաններից և հիվանդանալով օտարության մեջ՝ տառապում էր հայրենիքի կարոտից.

Ո՛վ կտար ինձ ծուխը ծխանի
Եվ առավոտը Նավասարդի,
Վազելը եղնիկների
Եվ վարզելը եղջերուների,
Մենք փող էինք խփում
Եվ թմբուկ զարկում,
Որպես օրենքն է թագավորների²:

«Ժողովրդական բանահյուսության մեջ,- գրում է Ա. Եղիազարյանը,- տիրապետողը, ինչպես հայտնի է, կոլեկտիվ հայացքն է աշխարհի նկատմամբ: Կոլեկտիվ հայացքի կրողը և արտահայտիչը նույնպես անհատներն են՝ ասացողները, պատմողները»³: Տվյալ դեպքում դրամայի հերոսներն են կա՛մ ասացողները, կա՛մ պատմողները: Նրանք են հաճախակի դիմում ժողովրդական բանահյուսության անսպառ գանձարանին: Տիգրան Մեծի թագադրության ժամանակ Արտաշեսի կտակի մեջ հնչում է համարյա նույն խոսքը.

...Ավաղ, ո՛վ կտա ծխանի ծուխն ինձ
Եվ առավոտը մեր Նավասարդի,
Եզների վազքը և եղնիկների թռիչքն անման:
Մենք փող հարկանեինք և թմբուկ ձեծեինք՝
Թագավորական կարգի համաձայն⁴:

Հայ հեթանոսական դիցարանի սիրտ աստվածուհու՝ Աստղիկի մասին հանրահայտ գրույցը նույնպես վարպետորեն է օգտագործել հեղինակը: Այդ գրույցի մասին է շինական Արևշատից հարցնում դրամայի գլխավոր հերոսը՝ Տիգրան Արմենը.

Դու երբնիցե կրակ վառե՛լ ես.
Տաղոնաց սարի սիգավետ լանջին,
Տեսնելու համար՝ ինչպես է լողում
Միրուն Աստղիկը Արածանու մեջ,
Իր շուրջը բարակ մշուշ քաշելով,
Որ քո անհամեստ աչքերից ծածկվի (239):

Արևշատի պատասխանում առկա է ժողովրդական գրույցը Մուշ քաղաքի և նույնանուն դաշտի անվան ծագման վերաբերյալ.

Ավա՛ դ, թագավոր,
Դու հիշեցնում ես ինձ իմ գնացած ջահելությունը,
Ինչպե՛ս չէ, արքա, այդ մշուշիցն է
Իր անունն ստացել մեր Մուշ քաղաքը:

² Հայ հին և միջնադարյան քնարերգություն, Ե., 1986, էջ 13:

³ Եղիազարյան Ա. Վ., Գեղարվեստական պատում, Ե., 1986, էջ 79:

⁴ Խաչիկ Դաշտենց, Լեռան ծաղիկներ, Ե., 1963, էջ 148: Այսուհետև այս գրքից արվող մեջբերումների էջերը կնշվեն բնագրին կից:

Տիգրան

...Բայց նայի՛ր, նայի՛ր, մեր աստվածուհի
Աստղիկն է իջնում իր լողարանը,
Եվ տե՛ս, մշուշ է կապում իր շուրջը (239):

Այս պատկերը նույնպես ծառայում է հեղինակի արծարծած գրչիսավոր՝ հայրենիքի պաշտպանության գաղափարին: Տիգրանի գրույցի նպատակը նույնպես դա է.

Եթե ուզում ես, որ այդ գեղեցիկ պատկերը մնա,
Եթե ուզում ես, որ քո ակուրթի ծուխը բարձրանա,
Եվ արագիլը բուն կապե բարդուղ կանաչ կատարին,
Ուրեմն, ամուր սեղմիր նիզակդ, քաջահաղթ զինվոր (242):

Արքայի կոչին եռանդով է արձագանքում ռամիկը՝ Արևշատը.

Կմեռնեմ, արքա, բայց ես թույլ չեմ տա,
Որ Վայկունը գա և իմ օջախի սուրբ ծուխը մարի... (242):

Տիգրանի ժամանակներում փառաբանվում էին հայրենիքի համար մարտիրոսավորները: Եվ բնական է, որ դրամայի հերոսները հարգանքով ու սիրով են վերաբերվում նրանց, ովքեր զոհվում են հանուն հայրենյաց: Ինքը՝ Տիգրանը, երազում է քաջի մահով ընկած Արևշատի պես իր կյանքը նվիրաբերել հայրենիքին. ինչե՛ր չէր տա նման երջանիկ մահվան համար: Դրամայում Աստղիկը և Մամիկը ակնածանքով են խոսում այն հերոսների մասին, որոնք հանգչում են հայրենի հողում, իսկ արքան պատրաստ է համբուրել անձնվեր քաջի սուրբ: Նրա պես հայրենասեր էին հայոց քրմապետը, Սլաք Սլկունին, Մամագոնը, Մար թագավորը: Սլկունին, մայրաքաղաք Տիգրանակերտը հրդեհների բոցերի մեջ տեսնելով, արտասվում է: Բմանալով, որ, Արևշատից բացի, անհավասար մարտում ընկել են նաև հայոց քրմապետն ու թագավոր Մարը, Տիգրանը հրամայում է.

... այնտեղ, ուր ընկավ քրմապետն հայոց,
Մեծ բազին կանգնել,
Եվ արնի տակ, քանի կանգուն է աշխարհ Հայասին,
Ռամիկ, թե իշխան գոհեր մատուցե և հիշե նրան (253):

Հայոց արքան համոզված է, որ հիմնականում հասարակ մարդիկ են կոմոդոն ու հաղթողը: Դրա համար էլ, նայելով Արևշատին, գոչում է. «Այս շինականն էլ ամեն ինչ կանե» (242):

Պատմական վավերագրերից պարզվում է, որ Անահիտից և մյուս աստվածներից թագավորները խնամակալություն էին հայցում: Ազգաթանգեղոսը «Պատմություն հայոց» աշխատության մեջ գրում է. «Թող ողջուն և խաղաղություն հասնի աստվածների օգնականությամբ, պարարտ լիություն՝ արի Արամագոյից, խնամակալություն՝ Անահիտ տիկնոջից, քաջություն ամենայն Հայոց աշխարհիս՝ քաջն Վահագնից»⁵: Հեթանոսական Հայաստանում արքայից արքան հաճախ էր դիմում հայոց դիցարանի աստվածների օգնությանը՝ նույնը առաջարկելով բոլորին.

⁵ Ազգաթանգեղոս, Պատմություն հայոց, Ե., 1977, էջ 64:

Եթե անգոր եր՝ մեր աստվածներից գորություն առեք,
 Թող Անահիտը ձեզ արգաստվորի,
 Թող Աստղիկը ձեզ սիրով բորբոքի,
 Եվ վիշապաբաղ հգոր Վահագնը ոգեշնչի ձեզ (246):

Ստանալով իր դաշնակից Միհրդատ Պոնտացու նամակը, որով հայտնվում է Սուլլայի հարձակվելու լուրը, Տիգրանը խոսում է հայ ժողովրդական բանահյուսությանը բնորոշ ոգով.

Մնացի ր բարով, դո ւ, Նավասարդի չքնաղ առավոտ,
 Եվ Վարդավառի մեծ ուրախություն,
 Մնացե՛ք բարով, ցնծագի՛ն փողեր,
 Եվ իշխանական թմբուկնե՛ր անգին,
 Դեռ չճաշակած ձեր քաղցրությունը՝
 Պալատիս շեմքին,
 Ռազմի փողերն են որոտում ուժգին (181):

Ձարմանալի չէ, որ հայոց դիցարանի հետ մեծն Տիգրանը հիշում է նաև հունական աստվածներին, քանի որ այդ ժամանակաշրջանում հելլենիզմի ազդեցությունը Հայաստանում զգալի էր:

Շինական Մամիկը և Արևշատը հայ գեղջուկի հավաքական կերպարներն են: Նրանց խոսք ու գրույցի մեջ ժողովրդական խոսքի շունչը կա, իսկ Մամիկի երգը հիշեցնում է հայ ազգագրական երգի ռիթմիկ, հմայիչ ու հրայրքոտ, սրտաշահ աշխարհը՝ ասես արվեստով ու ոգով նույնանալով նրա հետ.

Արև լցվեց սար ու ձոր,
 Եկավ հայոց թագավոր,
 Ելնեմ մեր գյուղ՝ Մեծ Բագին,
 Աղոթք անեմ Աստղիկին:
 Ինձ աղջիկ տուր, Վարդամատ,
 Որ ես գնամ Աշտիշատ,
 Արևշատի հետ պարեմ,
 Իմ հին ուխտը կատարեմ (152):

Նույն զգացողությունն է առկա հետևյալ երգում, որը շինականները երգում են արքայի թագադրման ժամանակ.

Ծագեր, արև ծագեր,
 Գլխին ոսկե թագ էր,
 Իր շողերով բոց-բոց՝
 Լցվեր երկիրն հայոց (149):

Շինականների խոսք ու գրույցի, դատողությունների մեջ գրողը խտացնում է հողի և ժողովրդի միասնության վեհ գաղափարը. ժողովուրդը պաշտպանում է այն, ինչն իր գոյատևման հիմքն է, այն, ինչն ինքը ստեղծում ու կերտում է:

Վաղնջական ժամանակներից է Արարատը եղել հայ ժողովրդի սրբատուրք լեռը, հայի հույսի, լույսի և հավերժության խորհրդանիշը: Երբ Տիգրան արքան ընթերցում է Միհրդատ Պոնտացու նամակը, որով սա հայտնում է Տիգրանին՝ Սուլլայի հարձակման մասին, արքան ընթերցումն ավարտում է «Փա որ Մասիսներին» բառե-

րով: Եվ Մասիսների գովերգումն ու փառաբանությունը բնականորեն ձուլվում են դրամայի հյուսվածքին:

Դրամայի կարևոր արժանիքներից է ժողովրդական բառ ու բանի տեղին օգտագործումը, թևավոր խոսքերի և սուր արտահայտությունների լայն կիրառությունը: Օրինակները բազմաթիվ են՝

Ոճիրը, իշխան, այնքան վայրագ է,

Որ պետք է ծածկել դեպի այն տանող ամեն արահետ (186):

Բսկ Հռուֆի մեջ այլեկոծվում է մեծ խռովություն (187):

Քո սուրը փշրեց երկրիս կապանքը, ո՛վ հզոր արմեն (190):

Երագի նման ցնդեց ու գնաց (191):

Եվ անհաստատ է թագավորների փառքը աշխարհում

Մեկը գալիս է, մյուսը՝ գնում (195):

Նրա գորքերը հողմի պես անցան Ծոփաց լեռներով (209):

Թող հաղթանակի շեփորներ թնդան (267):

Այսպիսով, «Տիգրան Մեծ» դրամայում հեղինակը, վարպետորեն օգտագործելով ժողովրդական բանահյուսության անզուգական նմուշներ, պատկերները ոճավորել է թեմային պատշաճորեն երանգներով՝ հարազատ մնալով նկարագրվող դարաշրջանի ոգուն:

**ОТРАЖЕНИЕ ФОЛЬКЛОРА В
ДРАМЕ ХАЧИКА ДАШТЕНЦА “ТИГРАН ВЕЛИКИЙ”**

БАГДАСАРЯН С. С.

Резюме

Армянские мифы и сказания являются живительным источником, определенным образом обогатившим художественную литературу. Талантливый писатель, переводчик и поэт Хачик Даштенц (Тоноян) в своих произведениях (“Ходедан”, “Зов пахарей”, “Тигран Великий”) мастерски использовал неповторимые образцы армянского фольклора. Пользуясь неиссякаемым богатством армянского фольклора, в драме “Тигран Великий” Хачик Даштенц создал стилистически окрашенные образы героев, оставаясь при этом верным духу описываемой эпохи. В драме отражен культ армянского пантеона богов, народных песен и народного творчества в целом.